DOI:10.56653/18290361-2024.14-8

Դավիթ Պողոսյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն
d.poghosyan.historymuseum@gmail.com

ԱՆԻԻ ՀՆԱԴԱՐԱՆ – 120*

Հիմնաբառեր. Հնադարան, թանգարան, թանգարանացում, հուշարձան, Նիկողայոս Մառ, Թորոս Թորամանյան, Հովսեփ Օրբելի, Աշխարհբեկ Քալանթար:

Անիի «հնադարանի» կազմակերպումը

20-րդ դարի առաջին տասնամյակներում միջնադարյան Հայաստանի նշանավոր մայրաքաղաք Անիի տարածքում ծավալված պարբերական հնագիտական ուսումնասիրությունները և դրանց հիմքով թանգարանների ստեղծումը կարևոր ազդեցություն ունեցան Հայաստանում հնագիտության և թանգարանային գործի զարգացման վրա: Ականավոր արևելագետ Նիկողայոս Մառի (1864-1934 թթ.) ղեկավարությամբ պեղումներն Անիում սկսվեցին դեռ 1892-1893 թթ., սակայն պեղված նյութերը տեղում պահպանելու հնարավորություն չլինելու պատճառով Ն. Մառը դրանք տեղափոխեց Սանկտ Պետերբուրգ և 1893 թ. առաջարկեց Էջմիածնում հիմնել «թանգարան-հնադարան» (Սիմոնյան 1992, 123): Սակայն, ինչպես արշավախմբի անվանի անդամ, նշանավոր արևելագետ Հովսեփ Օրբելին (1887-1961 թթ.) էր հետագայում գրում. «միայն 1904 թ. երբ նիւթական միջոց գտնուեց Մանուչէի մզկիթը թանկարան դարձնելու, պեղումները վերսկսուեցին և այն ժամանակից սկսուած շարունակւում են ամեն տարի ամառները: Այս պեղումները, գիտական տեսակէտով տուին հարուստ գիւտեր, և այդ բոլորը պահւում են տեղումը: 1908 թուին հարկ եղաւ նոր յատուկ թանկարան շինել, այժմ այդ էլ լցուած է, և մտադրութիւն կայ նորը, աւելի ընդարձակը շինել» (Օրբելի 1911, 38) (նկ. 1):

Այսպիսով, 1904 թ. Անիում պեղումներին զուգահեռ հիմնադրվեց թանգարան, որը կոչվում էր «հնադարան»: Աշխատանքները ծավալվում էին Ռուսաստանի կայսերական ակադեմիայի արշավախմբի կողմից, սակայն դրանց ֆինանսավորման միջոցները հիմնականում գոյանում էին հայկական տարբեր համայնքներից արված նվիրաբերումներով: Բաքվում բնակվող բժիշկ, հասարակական գործիչ Հակոբ Զավրիյանը (1866–1920 թթ.) թանգարան ստեղծելու համար նախաձեռնեց դրամահավաք, որի արդյունքում ձեռք բերված 950 ռուբլի գումարը Ն. Մառն

* Ստացվել է 03.05.2024, ուղարկվել է գրախոսման 06.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

օգտագործեց Անիի հուշարձան-կառույցներից մեկը (Մանուչեի մզկիթ) նորոգելու, բարեկարգելու, տեղի հնություններն այստեղ հավաքելու և պահպանելու նպատակով (Ղաֆադարյան 1972, 32) (նկ. 2)։ Ն. Մառի կողմից 1906 թ. ապրիլի 6-ին Ս. Պետերբուրգի հայկական համայնքի համար կարդացած դասախոսության շրջանակներում հավաքված միջոցներով տպագրվեց «Անիոյ շարք» գրքույկներից առաջինը (Մառ 1906, III)։ Մեկ տասնյակից ավելի տարիներ իրականացված նպատակային հետազոտական աշխատանքները մշտապես ուղեկցվում էին նաև արշավախմբի կողմից դասախոսությունների ու տարբերի միջոցառումների կազմակերպմամբ, միջոցներ հայթայթելու և պեղված նյութերը հենց հնավայրում պահպանելու ու ցուցադրելու իր ժամանակի համար աննախադեպ փորձառությամբ։

Արդեն 1908-1909 թթ. հատուկ թանգարանի շենք կառուցվեց հնավայրում, որը ևս հայ հանրության՝ գյուղացիներից մինչև մեծահարուստներ, հանգանակած գումարների շնորհիվ հիմնվեց և շուտով ամբողջովին համալրվեց տեղում հայտնաբերված հնագիտական արժեքավոր ցուցանմուշներով։ Ականավոր գիտնական, արշավախմբի եռանդուն անդամ Աշխարհբեկ Քալանթարը (1884-1942 թթ.) գրում էր, որ պեղումները և գտածոների պահպանությունը «կատարւում է այնպիսի մի ծրագրով, որը նոր դարագլուխ է կազմում, չափազանց նշանակալից հայկական հնագիտութեան համար, միանգամայն տարբերւելով ընդունված սիստէմից, այն է՝ չենթարկել հայկական հնութիւններն ընդհանուր համապետական կենտրոնացման, այլ հենց տեղում հաւաքել, արժանավայել կերպով պահել և տեղի հետ միասին ուսումնասիրել» (Քալանթար 1909, 3)։ Ա. Քալանթարը, պատասխանելով արշավախմբի ղեկավար Ն. Մառի ընդդիմախոսներին, ավելացնում էր. «Անիում աշխատանքներն սկսւելու հետ հիմնվել է և թանգարան (որը կրում է ռուսերէն և հայերէն հետևյալ մակագրութիւնը «Անւոյ հնադարան, հիմնւած Բագւայ հայերի ծախքով») և այն ո'չ թէ «կիսականգուն» մի շինութիւն է, որտեղ «ժամանակաւորապէս դրւած են պեղումներից գտնւած խոշոր գանձերը», որպէս ենթադրում է Սերեբրակեան, այլ ամուր է ու հիմնաւոր, որտեղ մեծ խնամքով հաւաքւում են ընդ միշտ լինելու անխտիր բոլոր պեղած իրերը, գեղեցիկ դասավորւում և մեծ հսկողությամբ ու խնամքով պահվում» (Քալանթար 1909, 3)։

1909 թ. Անիում գործող երկու թանգարաններից առաջինում ներկայացված էին որմնազարդեր, շենքերի ներքին հարդարանքի բեկորներ, փորագիր փայտե առարկաներ, նկարազարդ որմնամասեր, դամբարանային նյութեր, հախճապակյա և ճենապակյա անոթներ, դրամների հավաքածու, եկեղեցական անոթներ, խաչեր, բուրվառներ, արդուզարդի պարագաներ և այլ ցուցանմուշներ, ներառյալ պեղումներով հայտնաբերված Գագիկ Ա Բագրատունու հայտնի արձանը՝ բոլորակ Ս. Գրիգոր եկեղեցու մակետը ձեռքին (տե՛ս նկ. 3)։ Հավաքածուների մանրամասն նկարագրությունը ընթացքում տրվում էին Ն. Մառի և Հ. Օրբելու կողմից կազմված Անիի շարքի գրքույկներում (Մառ 1906; Орбели 1910; Ղաֆադարյան 1972, 32)։

Նորակառույց թանգարանային շենքում, որը նաև «Քարեդարան» էր անվանվում, հիմնականում կենտրոնացվեցին «ճարտարապետական մասեր, քանդակաւոր քարեր, սրանց մեջ և խաչքարեր, նոյնպէս և արձանագրութիւններ» (Օրբելի 1911, 52) (նկ. 4)։ Թանգարանների կազմավորմանը զուգահեռ, դրանցում թերևս առաջին

անգամ ծավալվեցին նպատակամետ թանգարանային գիտավերականգնողական, հաշվառման, համակարգման, կատալոգների, բացիկների հրատարակման աշխատանքներ: Կառուցված թանգարանային շենքը, ցուցասրահներից բացի, ուներ իրերի մաքրման, վերականգնման, ֆոտո լաբորատորիաներ, գիտական աշխատանքների համար կաբինետներ, գրադարան և այլ թանգարանային հետազոտական գործունեության հատվածներ (Սիմոնյան 1992, 124) (նկ. 5, 13-14):

1912 թ. վերանորոգվեց և թանգարանացվեց նաև Անիի բոլորակ Ս. Փրկիչ եկեղեցին, որի մեջ հավաքվեցին հիմնականում քարաբեկորներ: Այնուհանդերձ, Ն. Մառը զուտ հնագիտական հավաքածուների կազմման և դասական հնագիտական թանգարանների հիմման խնդիր այդքան չէր հետապնդում, որքան Անին ամբողջական ուսումնասիրելու և պահպանելու հեռու գնացող նպատակներ ուներ: Հ. Օրբելին գրում է, որ «Անիի պեղումների գլխաւոր հետևանքը այս բոլոր գիւտերը, մանր իրերը և քարէ յիշատակարանները չեն, այլ այն անվիճելի դրութիւնն է, որ չի կարելի Անիի մասին դատել երկրի երեսին գտնուած փոքրաթիւ բաներով, այլ պէտք է շատ հետազօտել և փորել, որ ներկայացուի Անին այնպէս՝ ինչպէս էր նա: Այդ դժուարին գործը գլուխ կըհանի Անիի հնախօսական ինստիտուտը, որը հաստատել է կամենում Գիտութիւնների Կայսերական Ճեմարանը» (Օրբելի 1911, 53): Նման մոտեցումը հնությունների պահպանման և արժևորման առավել լայն համատեքստում էր և վայելում էր հայ հասարակության, մտավորականների հավանությունն ու աջակցությունը:

Անիի հնադարանի ճակատագիրը

Առաջին աշխարհամարտը խանգարեց Անիի հուշարձանների հետագա ուսումնասիրմանն ու պահպանմանը, ավելին, խնդիր առաջացավ փրկելու երկար տարիների դժվարին աշխատանքի արդյունքում ձևավորված թանգարանային հավաքածուները: 1918 թ. Ն. Մառը, փորձելով ավելի ապահով վայր փոխադրել Անիի հնադարանի նյութերը, գնացքով արժեքավոր նմուշների և փաստաթղթերի մի զգալի մասն ուղարկում է Թիֆլիս, սակայն ճանապարհին դրանք անհետանում են: Հավաքածուների մյուս մասի փրկությունը նախաձեռնում է Աշխարհբեկ Քալանթարը, որը Սանահին գյուղից Հովսեփ Գալստյանի, Վաղարշակ Երիցյանի, Եսայի Էվոյանի, Հաղպատ և Օձուն գյուղերից այլ հայրենասեր հայորդիների հետ կարողանում է Խարկով գյուղի կողմից անցնել Ախուրյան գետը և հասնել Անիի հնադարան, որտեղ արշավախմբի մեկ այլ անվանի անդամ, ճարտարապետ Թորոս Թորամանյանը (1864-1934 թթ.) կարողացել էր 12 արկղերի մեջ տեղադրել հնադարանում մնացած արժեքավոր իրերի մի մասը: Մոտեցող թուրքական զորքերի հարձակման վտանգի ներքո հաջողվում է Գագիկ արքայի արձանը երկու մասով թաքցնել հնավայրում, իսկ արկղերը հասցնել Ախուրյան գետը, որտեղից իրերը տեղափոխվում են Սանահին և պահվում գյուղի հայտնի միջնադարյան վանական համալիրում մինչև 1926 թ. (Մուրադյան 1992, 37-39): 1918 թ. թուրքական ներխուժման հետևանքով Անիի հնադարանն ավերվեց (նկ. 6):

Սակայն Անին հայության գիտակցության մեջ շարունակում էր մնալ որպես հնությունների պահպանման կենտրոն: Հայաստանի առաջին Հանրապետության

տարիներին (1918-1920 թթ.) մի շարք հայ անվանի մտավորականներ կրկին նախաձեռնեցին հնությունների ուսումնասիրման և պահպանման քայլեր: 1920 թ. հունիսին Ալեքսանդր Թամանյանը, Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը, Աշխարհբեկ Քալանթարը դիմեցին ՀՀ կրթության և արվեստի նախարարություն՝ Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե հիմնելու անհրաժեշտության հարցով, որը և շուտով բավարարվեց: Նորաստեղծ կոմիտեի նախագահ Ալեքսանդր Թամանյանի (1878-1936 թթ.) զեկուցագրի հիման վրա հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը կոմիտեին հատկացրեց Անի լքված գյուղի հողերը, որը և դարձավ «Անիի հնությունների պահպանության կենտրոն» (Սարգսյան 2005, 7): Կոմիտեն նաև գիտական արշավախումբ կազմակերպեց Անիի հետազոտությունները շարունակելու համար, սակայն սկսված աշխատանքները կրկին ընդհատվեցին թուրքական նոր հարձակումների և Հայաստանում խորհրդային իշխանության հաստատման հետևանքով առաջացած ռազմաքաղաքական իրավիճակի հետևանքով:

Հայաստանի առաջին Հանրապետության անկմամբ, բոլշևիկյան և քեմալական պայմանավորվածությունների հետևանքով, ցավոք, Անին այլևս դուրս մնաց Հայաստանի սահմանից. այդպիսով հուշարձանները շարունակվեցին ժամանակի ընթացքում ավերվել և մնալ հիմնականում չուսումնասիրված: Միայն 1988 թ. Անին ներառվեց Թուրքիայի հուշարձանների ցանկում՝ որպես առաջին աստիճանի պահպանման ենթակա հնավայր, իսկ 2016 թվականից՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում՝ որպես համամարդկային մշակութային արժեք (Archaeological Site of Ani):

Անիից փրկված 2344 իրերը դարձան Հայաստանի պատմության թանգարանի ամենարժեքավոր հիմնական հավաքածուներից մեկը, որոնցից առավել ուշագրավ ցուցանմուշները 1935 թվականից առանձին ցուցասրահում են ցուցադրվում՝ որպես մշտական ցուցադրության հատված (նկ. 7): Ավելին, Անիի արշավախմբի ակտիվ անդամ և հավաքածուների փրկող Ա. Քալանթարի ջանքերով 1920–ական թթ. «Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեի» շենքում կազմակերպվում է հնադարանի ցուցադրական ավանդույթները շարունակող մի մեծածավալ ցուցահանդես, որի ընթացքում ներկայացված էին կոմիտեի անցած յոթ տարիների ակտիվ գործունեության արդյունքում հավաքված ցուցանմուշները: Վերջիններս 1930 -ական թթ. սկզբին հանձնվեցին Հայաստանի պատմության թանգարանին (նկ. 8): Անիի արշավախմբի ականավոր անդամ, ճարտարապետ Թորոս Թորամանյանը դարձավ թանգարանի ճարտարապետական բաժնի հիմնադիր ղեկավարը, իսկ արշավախմբի լուսանկարիչների՝ Վրույրների ընտանիքի կրտսեր անդամը՝ Արտաշես Վրույրը (1897-1987 թթ.), թանգարանի առաջին լուսանկարչական լաբորատորիայի ղեկավարն էր:

Անիի հնադարանը՝ որպես հուշարձանների թանգարանացման հարացույց

Խորհրդային կարգերի հաստատումով նոր իրողություններում ծավալվեցին պատմամշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, ինչպես

նաև օգտագործման աշխատանքները: Խորհրդային գաղափարախոսության քարոզչության ենթատեքստում հուշարձանների թանգարանացումը սկսեց դիտարկվել որպես ակտիվ լուսավորչական, ապա նաև քաղաքական քարոզչության միջոցներից մեկը (Պողոսյան 2008, 70-71): ՀԽՍՀ Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի կազմում սկզբում ստեղծվեց Հնությունների պահպանության բաժին, ապա՝ Հնությունների պետական պահպանության կոմիտե, որը վերանվանվեց «Հնությունների յեվ գեղարվեստից հուշարձանների պահպանության կոմիտե», և ՀԽՍՀ Ժողկոմխորհի 1923 թ. դեկտեմբերի 18-ի դեկրետով ստեղծվեց Հայաստանի Հնությունների պահպանության կոմիտեն (Քալանթար 1931, 88): Այս կառույցը շարունակեց Անիի փորձը և գործունեությունը, որին իրենց ջանադիր և ծանրակշիռ մասնակցությունը բերեցին մշակույթի ու գիտության անվանի գործիչներ Ալեքսանդր Թամանյանը (առաջին նախագահ), Աշխարհբեկ Քալանթարը (քարտուղար), Մարտիրոս Սարյանը, Թորոս Թորամանյանը և այլք: Միաժամանակ սկսեց ձևավորվել ազգային թանգարանը, որի կազմակերպման գործում նշված գործիչների հետ միասին մեծ աշխատանք տարան Երվանդ Լալայանը, Երվանդ Շահազիզը և այլք:

Այս առումով հետաքրքրական էր 1930-ական թթ. Ս. Հռիփսիմե եկեղեցու և շրջակա միջավայրի թանգարանացումը: Կ. Ղաֆադարյանի հոդվածում մանրամասն ներկայացվում են հուշարձանի թանգարանացման աշխատանքները, որի անմիջական մասնակիցն է եղել հեղինակը (Պողոսյան 2014, 289-295): Պետականացվելուց հետո եկեղեցին՝ իր հարակից կառույցներով, մի որոշ ժամանակ ծառայեց հնագիտական արշավախմբի աշխատանքային կարիքներին, ապա այստեղ առանձին դահլիճում ցուցադրվեցին Զվարթնոցում պեղված հավաքածուները, որոնք հետո տեղափոխվեցին այնտեղ կառուցված թանգարան: Եկեղեցու հարակից շենքերում տարբեր հնավայրերից հավաքված հնությունները հիմք դարձան ստեղծելու «Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի Վաղարշապատի հնադարան-թանգարան»: 1936 թ. դրությամբ եկեղեցում ցուցադրությունը սկսվում էր հարավ-արևելյան մասից և պտույտով ավարտվում հյուսիս-արևելյան մասում. հնագիտական իրերով ներկայացված էին «Տոհմատիրական, Խալդական, Արշակունյաց դարաշրջանները, Հնագույն քրիստոնեական ճարտարապետական արվեստը և Վիմական արձանագրությունները», որոնց զուգահեռ կային կրկնօրինակներ, լուսանկարներ, բացատրագրեր: Ցուցադրված էին ինչպես մոտակա հնավայրերում հայտնաբերված նյութեր, այնպես էլ՝ տարբեր հուշարձաններից բեկորներ, ընդհուպ Գառնու տաճարի երկու խոյակները (նկ. 9): Հարակից շենքում ցուցադրվում էին Զվարթնոցից բերված հնությունները և այլ վայրերից հավաքված նյութեր, օրինակ՝ Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարներից, Էջմիածնի հնագույն սադափե դռները և այլն (նկ. 10): 1940 թ. թանգարանը լուծարվեց և հավաքածուները հանձնվեցին Հայաստանի պատմության թանգարանին (Պողոսյան 2014, 289-295):

Հնավայրի տարածքում թանգարան կառուցելու Անիի փորձը լավագույնս դրսևորվեց Զվարթնոցում, որտեղ պեղումներ էին ընթանում դեռ 19-րդ դ. 90-ական թթ.: Արքեպիսկոպոս Խաչիկ Դաղյանի (1863-1936 թթ.), ապա հայտնի ճար-

տարապետ Թորոս Թորամանյանի (1864-1934 թթ.) ղեկավարությամբ 1900-ական թթ. սկզբից ծավալված պեղումներին զուգահեռ, հնավայրին կից կառույցի սենյակներից մեկում ժամանակի ընթացքում ձևավորվել էր թանգարան, որը 1920-ական թթ. հենց այդպես էլ անվանվում էր:

ՀՍԽՀ Լուսժողկոմատի 1923 թ. մարտի 20-ի № 1138 հրամանով ստեղծվել էր «Զվարթնոց» հնագիտական վայրը, որի պահպանությանը հանձնված իրերի ակտում նշվում էր, որ թանգարանում առարկաները ներկայացված էին «6 պահարանի (վիտրինա) և 8 բաց տարածքների (էտաժերկա) մեջ (Պողոսյան 2018, 28): Հնավայրի տարածքում Զվարթնոցի նոր թանգարանի կառուցումն ավարտվեց 1937 թվականին և որոշակի վերափոխումներով այսօր էլ գործում է իր հիմնադրման վայրում: Կ. Ղաֆադարյանը 1937 թ. բացված Զվարթնոցի նոր գիտական ցուցադրությունը նկարագրելիս նշում էր, որ սկզբնապես մեկ ցուցասրահ զբաղեցնող (70 մ^3) թանգարանը «ծառայում է միայն նրա (Զվարթնոցի) ավերակներին և նրա հետ առնչություն ունեցող մյուս հուշարձաններին <….>: Աշխատել ենք նյութերը ցուցադրել այնպես, վոր այցելուն, ավերակներ դիտելուց հետո, իր մտքում գտնի մի շարք հարցեր, այն է՝ տաճարի սկզբնական տեսքի, ներքին հարդարանքի, կառուցման ժամանակի, ճարտարապետության առանձնահատկությունների և այլնի վերաբերյալ հարցերի պատասխանները կարողանա գտնել հենց թանգարանում»: Թանգարանը կրում էր Անիի 1908 թ. բացված «քարեղարանի» ազդեցությունը (Պողոսյան 2017, 220-221) (նկ. 11):

1940 թ. հրատարակված գրքույկներից մեկում նշվում էր, որ Խորհրդային Հայաստանում «*շրջանային հնագիտական պատմական թանգարաններ*» կան միայն Վաղարշապատում, և Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատի կոլեգիան 1939 թ. նոյեմբերին որոշում ընդունեց և հանձնարարեց պատմական հուշարձանների կոմիտեին նման թանգարաններ կազմակերպել Հայաստանի տասը շրջաններում» (Դարյան 1940, 16):

Անիի փորձի հիման վրա հուշարձաններն իրենց պատմական միջավայրում թանգարանի վերածելը և նաև հենց հուշարձաններին կից թանգարանների կառուցումը հետագայում շարունակվեց: Խորհրդային տարիներին միտում կար գրեթե բոլոր կանգուն վանական համալիրների և եկեղեցիների ներսում ցուցադրություններ կազմակերպել, ինչպես Անիի առաջին հնադարանի դեպքում էր, իսկ Զվարթնոցի հնավայրին կից թանգարանի կազմակերպման Անիի «Քարեղարանի փորձը» կիրառվեց Դվինի պեղումների ընթացքում (նկ. 12), ապա նաև 1960-ական թթ. «Էրեբունի» և «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանների կազմակերպման դեպքում (Պողոսյան 2018, 47-52):

Եզրակացություն

2024 թ. լրանում է Անիի պարբերական պեղումների մեկնարկի և առաջին թանգարանի՝ «հնադարանի» հիմնադրման 120 ամյակը: Տարին նաև խորհրդանշական է արշավախմբի ղեկավար, անվանի արևելագետ Նիկողայոս Մառի, արշավախմբի հայտնի անդամ, ճարտարապետ Թորոս Թորամանյանի 160-ամյակների, ինչպես նաև Անիի հավաքածուի փրկիչ, անվանի հնագետ Աշխարհբեկ

Քալանթարի 140-ամյակը: Արշավախմբի այս և մյուս անվանի անդամների գործունեությանը խոնարհումի մի համեստ քայլ է այս հոդվածը, որի եզրահանգումներում կարող ենք նշել.

- Անիի պեղումներով կարևորվեց հնությունների՝ համալիր և իրենց տեղում պահպանելու խնդիրը:
- Նոր տիպի աշխարհիկ թանգարանը՝ «հնադարանը», ընդլայնեց հնությունների պահպանման հորիզոնը՝ ընդգրկելով որոշակի պատմական միջավայր:
- Ստեղծված թանգարանները, փաստորեն, առաջին հայկական գիտական թանգարաններն էին, որոնք հիմնվեցին հանրային միջոցների, հետևապես նաև նման հասարակական ինստիտուտների արժևորման գիտակցության հիմքով: Անիի պեղումները և ստեղծված հնադարանը դարձան հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման և փրկության խորհրդանիշ:
- Անիի հնադարանի փորձը շարունակվեց խորհրդային տարիներին Հայաստանում հնագիտական թանգարանների ու ցուցադրությունների կազմակերպման գործընթացում:
- Անիի փորձն այսօր էլ արժեքավոր է Հայաստանում ամեն տարի ավելի մեծ ծավալով ընթացող հնագիտական պեղումների և դրանց արդյունքում հայտնաբերված արժեքավոր հավաքածուների պահպանման, տեղում թանգարանացման, ինչպես նաև ռազմական գործողությունների ընթացքում մշակութային արժեքների փրկության ու սերունդներին ավանդման տեսանկյունից:
- Հայաստանի պատմության թանգարանը՝ որպես Անիի հնադարանից փրկված հավաքածուի պահպանող և դրա փորձի ու նվիրումի կրող, 2024 թ. իր՝ Անիի ավանդական մշտական ցուցադրությանը կից մի հատուկ հատված ավելացրեց՝ նվիրված Անիի արշավախմբին և նրա ստեղծած «հնադարանին»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԴԱՐՅԱՆ 1940 - Դարյան Վ., *Հնագիտական թանգարանները յեվ պատմական հուշարձանների պահպանության խնդիրները*, Յերեվան, 1940:

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1972 - Ղաֆադարյան Կ. Գ., Հայաստանի թանգարանների պատմությունից, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Եր., № 10 (1972), 20-35:

ՄԱՌ 1906 – Մառ Ն., *Համառոտ ցուցակ Անիոյ հնադարանի*, Ս.-Պետերբուրգ, 1906:

ՄՈՒՐԱԴՅԱՆ 1992 - Մուրադյան Վ., Գնացքը տեղ չհասավ. մեր որոնումները: Հանդիպում առաջին. Թումանյան, Սանահին ..., *«Անի» հանդես*, 1992, 37-39:

ՊՈՂՈՍՅԱՆ 2008 - Պողոսյան Դ. Ա., *Թանգարանը մշակութային հաղորդակցության միջավայր*, Եր., 2008:

ՊՈՂՈՍՅԱՆ 2014 - Պողոսյան Դ., Կարո Ղաֆադարյանի «Վաղարշապատի հնագիտական թանգարանը» հոդվածը, *Բանբեր Հայաստանի արխիվների, N 122*, Եր., 2014, 289-295:

ՊՈՂՈՍՅԱՆ 2017 - Պողոսյան Դ., Կարո Ղաֆադարյանի «Զվարթնոցի թանգարանը» հոդվածը, *«Բանբեր Հայաստանի արխիվներ» գիտական ժողովածու, № 125*, 2017, 219-232:

ՊՈՂՈՍՅԱՆ 2018 - Պողոսյան Դ., *ՀՀ պատմամշակութային արգելոց-թանգարանների ստեղծման գործընթացը և կազմակերպման սկզբունքները*, Եր., 2018:

ՍԱՐԳՍՅԱՆ 2005 - Սարգսյան Գ., *Պատմամշակութային հուշարձանների պահպանության հիմունքներ*, Եր., 2005:

ՍԻՄՈՆՅԱՆ 1992 - Սիմոնյան Ա. Շ., Անիի հնագիտական թանգարանը, *«Անի» հանդես*, 1992, № 3-4, 123-125:

ՔԱԼԱՆԹԱՐ 1909 - Քալանթար Ա., Անիի պեղումները և երկու «հայի ձայնը», *«Գործ»*, Թիֆլիս, 1909, ապրիլի 4, № 68, էջ 3:

ՔԱԼԱՆԹԱՐ 1931 - Քալանթար Ա., Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, *«Գիտությունը յեվ գիտական-հետազոտական աշխատանքը Խորհրդային Հայաստանում 1920-1930 թթ.»*, Յերեվան, 1931:

ՕՐԲԵԼԻ 1911 - Օրբելի Յ., *Անւոյ աւերակները: Պատմութիւն, այժմեան վիճակ, պեղումներ*, թարգմանեց ռուսերենից և կազմեց միաբան Ս. Էջմիածնի Յուսիկ Արքեպիսկոպոս (արտատպուած Արարատ ամսագրից), Վաղարշապատ, 1911:

ОРБЕЛИ 1910 - Орбели И., *Каталог Анийского музея древностей*, С.- Петербургъ, 1910.

ARCHAEOLOGICAL SITE OF ANI- Archaeological Site of Ani, web site of UNESCO's World Heritage Centre, https://whc.unesco.org/en/list/1518 (29. 04. 2024).

Davit Poghosyan

Candidate of Pedagogical Sciences, Associate professor

Director of the History Museum of Armenia

d.poghosyan.historymuseum@gmail.com

ANI "HNADARAN" - 120

Keywords: "hnadaran", museum, musefication, monument, Nikolay Marr, Toros Toramanyan, Hovsep Orbeli, Ashkharhbek Kalantar.

This year marks the 120th anniversary of the beginning of periodic excavations in the early 20th century in Ani, the renowned medieval capital of Armenia, and of the "Hnadaran" (Museum of Antiquities), the first museum founded there. Also the 160th anniversary of the birth of the famous orientalist N. Marr, the leader of the expedition that organized these studies and the "Hnadaran" with great difficulty, 160 years since the birth of the architect Toros Toramanyan, and the 140th anniversary of the birth of archaeologist Ashkarbek Kalantar, who saved a valuable part of the museum collection from the Turkish attacks. The archaeological studies of Ani and the museums founded there, the "Hnadaran", became a symbol of the preservation, study, rescue and transmission of the Armenian historical and cultural heritage and they were realized thanks to the support and donations of the Armenian communities. The article is a humble homage to the activities of the Ani expedition and the legacy of the eminent scholars who participated in it, as well as a new interpretation of the museum experience as the museumification of monuments and the organization of archaeological exhibitions in Armenia.

Давид Погосян

Кандидат педагогических наук, доцент

Директор Музея истории Армении

d.poghosyan.historymuseum@gmail.com

АНИЙСКИЙ МУЗЕЙ ДРЕВНОСТЕЙ - 120

Ключевые слова: Анийский музей древностей, музей, музеефикация, памятник, Николай Марр, Торос Тораманян, Иосиф Орбели, Ашхарбек Калантар.

В этом году исполняется 120 лет со дня начала периодических раскопок в Ани, известной средневековой столице Армении, в первые десятилетия 20-го века, 120- летие основанной там первого музея (Анийский музей древностей), 160-летие руководителя экспедиции, известного востоковеда Н. Марра, организовавшего с большим трудом эти исследования и Анийский музей древностей и 140-летие Ашхарбека Калантара, спасшего ценную часть музейной коллекции от турецких нападений. Археологические исследования в Ани и основанные там музея древностей стали символом сохранения, изучения, спасения и передачи наследия армянской исторической культуры поколениям, и они были проведены при поддержке и пожертвованиях армянских общин. Статья представляет собой скромную дань уважения деятельности экспедиции Ани и наследия, дошедшего до нас от известных ученых, участвовавших в ней, а также новая интерпретация полученного в результате этого музейного опыта как музеефикации памятников в Армении и организации археологических выставок.